Պարույր Սևակ

Անվերնագիր 3

Ախ, ինչպես եմ սիրում ժեռ քարերի վրա
Ինքնամոռացումը մեր խենթ ջրվեժների,
Մեր ձորերը անտակ, մեր ծերպերը մռայլ,
Կենդանակերպ տեսքը մեր ապառաժների:
Մեր կեռ կածանները, որ անջուր առվի պես,
Մերթ՝ միայնա՜կ, խոռ՜վ, մերթ՝ խճողո՛ւն,
Գլորվում են սարից, գալիս ու վերջապես
Ձուլվում գետի նման լայն խճուղուն:
Ձորերն ի վար խուժող մեր մշուշը կապույտ՝
Ներշնչման պես ցնդող, հղացման պես անձև,
Մեր ամպերի լողը, մերթ ցաքուցի՜ր, անփո՛ւյթ,
Ու մերթ՝ հանդիսավո՜ր թափո՛ր լինի կարծես:
Մեր սարերը ձյունոտ, արոտները կանաչ,
Կարոտը երգեցիկ՝ կոմիտասյա՜ն,
Մեր հարսների քայլքը, նազանքը մեր կանանց՝
Ամեն մեկը խոյակ միայն մի սյան:
Մեր հին պատմությունը՝ մի փառահեղ վիպերգ-
Հյուսված կրկներգներով սխրանքների, ցավի,
Ու մեր ներկան՝ իբրև և՛ անցյալի վերջերգ,
Ե՛վ նախերգանք վաղվա, ապագայի:

14.IV.1951թ.

Երևան Երևան